ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կապուտան, (098) 42-88-38, (077) 67-08-01, kaputan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թվականի N 34

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի ԹԻՎ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով,

Համայնքի ավագանին *որոշում է*.

1. Հաստատել համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 արտահերթ նիստի հետևյալ *օրակարգը*.

1) Համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին:

2) Համայնքի ավագանու 2016թ.-ի դեկտեմբերի 1-ի թիվ 48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

3) Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԷԴՎԱՐԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍ
3. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ
4. ՁԱՔԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀԱՆ
7. ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կապուտան, (098) 42-88-38, (077) 67-08-01, kaputan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թվականի N 35-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին *որոշում է.*

1. Սահմանել Կապուտան համայնքի ղեկավարի կողմից 2017 թվականի ընթացքում կամավոր լիազորությունների իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -7

1. ԱՎԱԳՅԱՆ ԷԴՎԱՐԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍ
3. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ
4. ՉԱՔԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀԱՆ
7. ՍԵՂՐԱԿՅԱՆ ՍԵՂՐԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՐԳ
ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Գ. ԿԱՊՈՒՏԱՆ
2017Թ.

Հավելված
Կապուտանի գյուղական համայնքի ավագանու
2017 թվականի օգոստոսի 2-ի N 35 – Ա որոշման

ԿԱՐԳ

ԿԱՊՈՒՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնքի ղեկավարի՝ (այսուհետ՝ համայնքի ղեկավար) կամավոր լիազորությունների և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների (այսուհետ՝ լիազորություններ) տրամադրման կարգը:

2. Լիազորությունների իրականացման կարգը սահմանվում է **«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն:**

3. Համայնքի ղեկավարը կամավոր լիազորություններ իրականացնում է հետևյալ բնագավառներում՝

պաշտպանության կազմակերպման բնագավառ

1) աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը.
2) աջակցում է զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, ինչպես նաև զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը.
3) աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

1) իրականացնում է բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը.
2) իրականացնում է կառուցապատման աշխատանքները.
3) կազմում է «Քաղաքաշինության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված, ըստ անհրաժեշտության մշակվող, քաղաքաշինական փաստաթղթերի նախագծերը.
4) կազմակերպում է հանգստի վայրերի խնամքը և պահպանությունը.
5) կազմակերպում է սանիտարական մաքրման կայանքների շինարարությունը և շահագործումը:

հողօգտագործման բնագավառ

1) իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքներ.
2) իրականացնում է ներտնտեսային հողաշինարարական աշխատանքներ:

տրանսպորտի բնագավառ

կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, կամուրջների և ինժեներական այլ կառույցների շինարարությունը:

կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ

1) աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը.
2) աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը.
3) հաշվառում, դասակարգում և տարածում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային, բնական և տուրիստական-ռեկրեացիոն ռեսուրսների մասին տեղեկատվությունը.
4) աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը.
5) աջակցում է հանրակրթական դպրոցների գործունեությանը:

առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ

1) աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը.
2) աջակցում է առողջապահական մարմինների՝ սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը.
3) նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն, ստեղծում է հանգստի գոտիներ:

աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառ

1) նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ.
2) միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

4. Կամավոր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներն ըստ բնագավառների տրամադրվում են տվյալ տարվա համայնքի բյուջեով նախատեսված և հաստատված ֆինանսավորմանը համապատասխան:

5. Յուրաքանչյուր տարի կամավոր լիազորությունների իրականացման համար համայնքի ղեկավարին կարող է նախատեսվել հատկացնել ֆինանսական միջոցներ, որը չի կարող գերազանցել այդ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 20%-ը:
6. Կամավոր լիազորությունների իրականացման համար ֆինանսական միջոցների հատկացում չպահանջվելու դեպքում համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:
7. Կամավոր լիազորությունների իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումներ:
8. Կամավոր լիազորություն իրականացնելու նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ առաջարկությունը (դիմումը)՝ նշելով օրենսդրությամբ նախատեսված լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:
9. Համայնքի ղեկավարը առաջարկությունը (դիմումը) և սույն կարգի 9-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝

1) կամավոր լիազորության իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր լիազորության իրականացման համար գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերը և ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և այդ մասին տեղեկացնում է նախաձեռնողին.

2) կամավոր լիազորության իրականացմանը չհամաձայնելու դեպքում նախաձեռնողին՝ գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

10. Եթե կամավոր լիազորության իրականացման նախաձեռնողը սույն կարգի 9-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում համայնքի ղեկավարից չի ստանում կամավոր լիազորության իրականացմանը չհամաձայնելու մասին գրավոր պատասխան կամ իր փաստաթղթերը համայնքի ավագանուն ուղարկելու վերաբերյալ գրություն կամ եթե նախաձեռնողը համաձայն չէ կամավոր լիազորության իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու մասին հիմնավորումներին, ապա 20-օրյա ժամկետում համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի կրկնօրինակը՝ սույն կարգի 9-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին, իսկ կամավոր լիազորության իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու վերաբերյալ գրավոր պատասխանի առկայության դեպքում՝ այդ պատասխանի վերաբերյալ իր առարկությունները և ավագանուն ուղղված դիմումը ներկայացնում է վերջինիս քննարկմանը:

11. Համայնքի ավագանին սույն կարգով հաստատված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց, ինչպես նաև իր նախաձեռնությամբ կամավոր լիազորության իրականացման դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարցը քննարկելուց հետո ընդունում է որոշում կամավոր լիազորության իրականացման համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

12. Համայնքի ղեկավարի որոշման մեջ նշվում են՝ կամավոր լիազորության իրականացման տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը:

13. Համայնքի ղեկավարը զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման , հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով՝ իր որոշմամբ հասարակական հիմունքներով կարող է ստեղծել մշտական գործող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են՝ համայնքի ավագանու անդամները, հասարակական կազմակերպությունների և միավորումների ներկայացուցիչները, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների մասնագետները, ինչպես նաև համայնքի բնակիչները և այլ շահագրգիռ անձինք, եթե նրանք այդ մասին նախապես տվել են իրենց համաձայնությունը:

14. Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է մինչև 50000 (հիսուն հազար) դրամ: Նույն ընտանիքին տարվա մեջ սոցիալական օգնության կարող է հատկացվել առավելագույն չափի քատապատիկի չափով:

15. Համայնքի ղեկավարը կամավոր լիազորություններն իրականացնում է աշխատակազմի, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և բյուջետային հիմնարկների միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կապուտան, (098) 42-88-38, (077) 67-08-01, kaputan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թվականի N 36-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 48-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 1-ի <<Կապուտան համայնքի 2017թ.-ի բյուջեի հաստատման մասին>> թիվ 48-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

Ծախսային մասով՝

1) 2111 տողի 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4261 հոդվածի 450.0 թիվը փոխարինել 412.0 թվով:
2) 2111 տողի 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4214 հոդվածի 156.8 թիվը փոխարինել 84.8 թվով:
3) 2842 տողի 08 բաժնի 4-րդ խմբի 2-րդ դասի 4819 հոդվածի 650.0 թիվը փոխարինել 760.0 թվով:
4) 2824 տողի 08 բաժնի 2-րդ խմբի 4-րդ դասի 4269 հոդվածի 200.0 թիվը փոխարինել 126.0 թվով:
5) 2111 տողի 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4241 հոդվածի 10.0 թիվը փոխարինել 84.0 թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԷԴՎԱՐԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍ
3. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ
4. ՋԱԲԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀԱՆ
7. ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կապուտան, (098) 42-88-38, (077) 67-08-01, kaputan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թվականի N 37

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2011 թվականի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով Կապուտան համայնքի գլխավոր հատակագիծը, **որոշում եմ՝**

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, համաձայն որի փոփոխել Կապուտանի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող կադաստրային ծածկագիր 07-036-0118-ից 0.08968հա և 07-036-0118-ից 0.05000հա հողամասերի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական նշանակությունից փոխարինել բնակավայրի նշանակության(բնակելի կառուցապատման) հողամասերի՝ համաձայն կից ներկայացվող հատակագծերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԷԴՎԱՐԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍ
3. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ
4. ՋԱՔԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀԱՆ
7. ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հաստատում եմ
Կապուտան համայնքի ղեկավար
Ս. Մելքոնյան

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կապուտան համայնք
Անուն, ազգանուն

Հողհատկացման հիմքը 15/11 վարչական 31.08.2011թ. N 10 «10» 07 2017թ.

Կոտայք
մարզ

Կապուտան
համայնք

Մասշտաբ 1:1000



ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅԱՆ

	ՀՈՂԱՄԱՍԻ
Մակերեսը քմ (հա)	0.08968 հա
Ծածկագիրը	07-036-0118-
Նպատակային նշանակությունը	բնակավայրերի
Գործառնական նշանակությունը	բնակելի կառուցապատման
Հողամասը ծանրաբեռնված է	

Սահմանային բնութագրական կետերի	Կոորդինատները Y	Կոորդինատները X	Հեռավորությունը (մետր)	Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը)	Հասցե (նոր հասցեների հատակագծի)	Գործառնական նշանակությունը (անվանումը)	Սահմանային բնութագրական կետերի	Կոորդինատները Y	Կոորդինատները X	Հատակագծի համար
1	8473667.669	4465244.148	2.44							
2	8473667.300	4465246.569	8.11							
3	8473667.688	4465254.655	36.20							
4	8473666.662	4465290.583	23.24							
5	8473708.106	4465273.846	28.22							
6	8473691.121	4465253.869	13.44							
7	8473683.009	4465243.110	15.43							
1	8473667.669	4465244.148								

Կատարող _____ ԱՁ Վալերիկ Գալստյան
(ստորագրություն) (Անուն, ազգանուն)

04.07.2017 թ.
(տրման ամսաթիվը)

Որակավորման վկայականի համարը 054 տրման ամիս, ամսաթիվը 15.12.2011 թ.

Իրավաբանական անձի 282.64083 Վալերիկ Գալստյան

Կետի հ/հ	Y	X	Հեռավո-ությունը (մետր)
1	8473667.669	4465244.148	2.44
2	8473667.300	4465246.559	8.11
3	8473667.688	4465254.655	38.20
4	8473688.662	4465286.583	23.24
5	8473708.106	4465273.846	26.22
6	8473691.121	4465253.869	13.44
7	8473683.069	4465243.110	15.43
1	8473667.669	4465244.148	

Հաստատում եմ՝
Կապուտան-Հիմայնքի ղեկավար
Ս. Մերկոնյան

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հողհատկացման հիմքը՝ ՀՀ կառ. 3108.2008 թ. N 1143 «10» 07 2017թ.

Կապուտան համայնք
Անուն, ազգանուն

Կապուտան
համայնք

Կոտայք
մարզ

Մասշտաբ 1:1000



	ՀՈՂԱՄԱՍԻ
Մակերեսը քմ (հա)	0.05000 հա
Ծածկագիրը	07-036-0118-
Նպատակային նշանակությունը	բնակավայրերի
Գործառնական նշանակությունը	բնակելի կառուցապատման
Հողամասը ծանրաբեռնված է	

Գագաթների բնութագրի համար	Կոորդինատները Y	Կոորդինատները X	Հեռավոր չափերը (մետր)
1	8473708.106	4465273.846	23.24
2	8473688.662	4465286.583	20.40
3	8473699.863	4465303.633	25.77
4	8473721.423	4465289.510	20.56
1	8473708.106	4465273.846	

ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅԱՆ

Սեփականության տեսակագրության (օգտագործման) անուն, ազգանունը (անվանումը)	Գործառնական նշանակությունը (անվանումը)	Գագաթների բնութագրի համար	Կոորդինատները Y	Կոորդինատները X	Հեռավորությունը (մետր)

Կատարող _____ Ա.Ս Վալերիկ Գալստյան
(ստորագրություն) (Անուն, ազգանուն)

04.07.2017 թ.
տրման ամսաթիվը

Որակավորման վկայականի համարը 054 տրման ամիս, ամսաթիվը 15.12.2011 թ.

Իրավաբանական անձի 282.64083 Վալերիկ Գալստյան

Կետի հ/հ	Y	X	Հեռավո-ությունը (մետր)
1	8473708.106	4465273.846	23.24
2	8473688.662	4465286.583	20.40
3	8473699.863	4465303.633	25.77
4	8473721.423	4465289.510	20.56
1	8473708.106	4465273.846	